

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԷՈՐԳ ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(Շարունակութիւն \*)

Յարձակմունքներ չիլֆսքունդի վրայ: Հիլֆսքունդի (Օդ-նուլթեան միութեան) գործունէութեանը շարքը թշնամաբար վերաբերեցին: Այդ բողոքները կարելի է այսպէս դասաւորել. բողոքներ՝ 1) տաճկական կողմից, 2) կաթողիկէներէ կողմից, 3) հայկական և 4) գերմանական կողմերից:

Քնական է, որ Սուլթանը չի ցանկանում, որ օգնութիւն և համակրութիւն ցոյց տուի իւր արած հայերին, նա լաւ հասկանում է, ի հարկէ, նաև որբանոցների քաղաքական նշանակութիւնը. բացի այդ, պետական ինքնասիրութիւնից նա չի ցանկանում, որ Դրից անմիջական կերպով իւր հպատակներին օգնութիւն հասցնելի, ովքեր և լինէին այդ հպատակները, թիւրքեր թէ հայեր, այն մտքով, որ եթէ իրօք մի որ և է կարիք լինէր՝ ինքը կարող կ'լինէր օգնելու:

Կաթողիկէները, վաղուց ի վեր մրցելով Արևելքում ամերիկեան բողոքական միսիոնարներին հետ, նայում են Հիլֆսքունդի

\* Տես «Մուրճ» 1899, № 11-12: 1900 թ. և № 1:

վրայ եթէ ոչ որպէս մի նոր գործիքի բողոքականութեան ստրամ-  
ժան Փոքր-Ասիայում և Հայաստանում, յամենայն դէպս ինչպէս մի  
կողմնակի միջոցի, որը իրենց կաթոլիկական քարոզութեան դէմ  
կարող է դժարութիւններ յարուցանել: Ի նկատի ունենալով սա-  
սականների գործելու ձևերը, որոնք միշտ խորշախուժիւններով  
են ներշնչւած և կուելու ոչ մի միջոց չեն արձամարում, պիտի  
զարմանալ, որ այս կողմից ձգնութեան միութեան, վրայ մինչև  
այժմ չեն արւած նշանաւոր յարձակութիւնները. սա, զուցէ, կարելի է  
բացատրել այն հանգամանքով, որ Վասիկանը, սահասարակ, ու-  
րախ է Գերմանիայի զօրեղանայուն Արևելքում: Գերմանիայի մի-  
ջոցով նա յոյս ունի աւելի լաւ պաշտպանել իւր շահերը, Թիւր-  
քիայում, քան Ֆրանսիայի:

Հայերի կողմից անբաւականութիւնը և թերահաւարութիւնը  
ծագած են շաւանական հողի վրայ. այսպիսի ասուում է, որ գերման  
Հիլֆսբունդը օգտուում է հայերի աղետալի դրութիւնից, նոցա մէջ  
իւր աւերարանական քարոզութիւնը առաջ քշելու համար: Այս  
թերահաւարութիւնը արտայայտւած է եղել և մեր մամուլի մէջ,  
որը հիմնուում էր, ինչպէս անմիջական աղբիւրներ—Թղթակցու-  
թիւնների վրայ այն քաղաքներից, ուր Հիլֆսբունդը ունի իւր  
որբանոցները, որպէս և օտար թերթերի յօդուածների վրայ: Պատ-  
րիարք Օրմանեանի նամակը մեծ վեղիրին, որը զրւած է եղել շա-  
ւանափոխութեան առիթով Հայաստանում, չի կարող չիշուել այս-  
պիսի որպէս այդպիսի թշնամական արտայայտութեան մի օրինակ:  
Թէպէտ և այս նամակի վրայ, ինչպէս օտարները, այնպէս և հայերը  
յաճախ հիմնում են իրենց գանդապների Հիլֆսբունդի նկատմամբ,  
բացց իսկապէս պատրիարք Օրմանեանի գրութեան մէջ մի խօսք  
անկամ չի ասուած ձգնութեան միութեան (Հիլֆսբունդի) մասին,  
նոյն իսկ ասուած էլ չէ թէ բողոքական միսսիօնարները, որոնց վրայ  
գանդապուում է նա մեծ վեղիրին,— գերմանացի են:

<sup>1</sup> «Zukunft» (=Ապագայ) գերմանական շարթաթերթում, 1898,  
հուլիսի 16, կալ մի շահեկան լոշւած (Der Kaiser im Orient=Ապագա  
Արևելքում՝ խորագրով) Վասիկանի դիրքի մասին դէպի Գերմանիայի  
Արևելեան քաղաքականութիւնը:

Վերջապէս, դերմանական յարձակումները «Օգնութեան միութեան» վրայ անուժ էին և մասամբ շարունակուժ են, երկու տեսակէտից—քաղաքական ու բարոյական: Նոքա, որոնք ջերմեռանդօրէն փափագուժ են Գերմանիայի հղորանալը Տաճկաստանուժ, ամէն կերպ աշխատուժ են ապացուցանել, որ Հիլֆսբունդի գործունէութիւնը խանգարուժ է Գերմանիայի ազդեցութեան բնական զարգացմանը 4. Պոլսուժ և ուզելով կոտրել Հիլֆսբունդի անունը, սկսուժ էին նւագել բարոյականութեան լարերի վրայ, վերագրելով նորա գործիչներին բողոքականութեան տարածման գործուժ գարշելի ձեեր. սորա նպատակն էր, ի հարկէ, գրկել Հիլֆսբունդը այն համակրողներից, որոնք փոշ են ուշարկուժ են նոցա յօգուտ հայերի: Բնականաբար գոնեեցան մարդիկ, որոնք հայտուեաց չիիննուժ, բայց չկարողանալով այս կամ այն պատճառով ստուգել այդ լուերը, լոկ բարոյական տեսակէտից սկսեցին պախարակել Հիլֆսբունդին վերագրուող վատ գործերը: Հետաքրքրական է, որ այս վերջիների թիւը շատ աննշան է, և այս հանգամանքը կարելի է, երևի, բացատրել նորանուժ, որ մեծամասնութեան համար պարզ էր Հիլֆսբունդի դէմ բողոքողների անբաւականութեան պատճառը, այսինքն—Գերմանիայի քաղաքական և ելեմտական շահերը Արևելքուժ: Ինչ վերաբերուժ է այն շրջաններին, ուր Հիլֆսբունդը վայելուժ է կատարեալ համակրութիւն և նիւթական օգնութիւն, այստեղ յարձակումների հետևանքները բոլորովին հակառակ հանդիսացան,— նւիրատուութիւնները շատացան:

Յոց տալով «Օգնութեան միութեան» դէմ եղած բողոքների շորս գլխաւոր աղբիւրները, այժմ կը զբաղենք աւելի մանրամասնօրէն գերմանական կողմից եղած յարձակումներով, և միայն սոցանուժ, որովհետև Սուլթանի և կաթոլիկների դժգոհութիւնները այն տեսակի են, որ նոցա աւելի լաւ պարզաբանելը հազիւ թէ կարողանայ նոր լոյս գոյել մեղ հետաքրքրող հարցի վրայ. ինչ վերաբերուժ է հայկական գանդապներին, ցաւուժ ենք որ մեզ յայտնի չէ հայոց լրագիրների Թիւրքիայից այս առիթով գրած թղթակցութիւնների բովանդակութիւնը. միւս կողմից էլ, ինչպէս ասացինք, հայկական գանդապները մասամբ հիմնւած են եղել նոյն գերմանական աղբիւրների վրայ:

Բնական է, որ պաշտօնական Գերմանիան, իւր ներկայ թիւրքամուլ քաղաքականութիւնը ինկատի առնելով, չի կարող շրջան կերպով, բացարձակօրէն, ոչ որևէ օգնութիւն հասցնել հայերին, ոչ էլ համակրութեամբ վերաբերել շէպի նոցա: Զարմանալի չէ նոյնպէս, որ նոյն երկրի կառավարութիւնը չի կարող գոհ լինել, երբ մինչև անգամ ոչ-պաշտօնական Գերմանիան, ինչպէս, օրինակ, Հիլֆսբուրգը, օգնութիւն է հասցնում հայերին և այսպէս թէ այնպէս զանազան կասկածանքներ և փոփոխութիւններ է ծագեցնում Սուլթանի մէջ: Այս կասկածանքները փոփոխական շահերի փոփոխութիւնը և կարող են բոլորովին անհիմն լինել: Բայց գերման կառավարութիւնը չի կարող զբաղել շոքա քննութեամբ, չի կարող հեռագրել իւր Պոլսի շեսպանին որ սա ապացուցանէ Սուլթանին, թէ սխալուում է, և հանգստացնէ նրան: Այդպէս կը գործէր Բերլինը, եթէ նորա յարաբերութիւնները շէպի Բարձրագոյն Գուռը չէզոք լինէին: Իսկ այժմ, մտադրութիւն ունենալով մի ահագին բարեկեան, ճրագիր իրագործելու, երբ նոյն ժամանակ բոլոր մնացած պետութիւնները, Սուլթանի գահը շրջապատած, անդադար մտնանիշ են անում իրենց պահանջների վերայ, խնդրելով, որ այլ և այլ շինութիւնների արտօնութիւնները իրենց արևի, և երբ այս կամ այն պետութեան յաղթանակը այդպիսի շէպերում, կախած է լինում շար անգամ Սուլթանի բողեական հաճոյքից, գերմանական կառավարութիւնը բնականաբար ոչ միայն չի կամենում միջնորդ լինել, հաշտեցնել Սուլթանին ոչ-պաշտօնական Գերմանիայի հետ, այլ ընդհակառակ, ուշադրութեամբ հետևում է Արդու-Համիլի տրամադրութեանը, միշտ պարտաւոր նորա հետ միասին, առանց սեփական կարծիքի, յարձակելու նորան բարկացնողների վրայ, և գուրգուրալու նորա սիրելիների վրայ:

Ոմանք ասում են, որ գերման կառավարութիւնը զաղտնի կերպով շար է համակրում Հիլֆսբուրգին, ի հարկէ, ոչ թէ սորա մարդասիրական զործունէութեան պարտաւորով, այլ այն մեծ ծառայութեան համար, որը Վոլթութեան միութիւնը կարող է անել Գերմանիայի ապագայ շահերի համար Տաճկաստանում, ինչպէս զաղտութիւն այնպէս և ելեմտական շահերի փոփոխութիւնը: Սա անկարելի չէ: Ընդհակառակը, հաւանական է որ գերմանական հեռափոխ քաղա-

քաղէտները լաւ հասկանում են, որ 2.000 հայ որբերի շատախարակութիւնը գերմանացիների միջոցով չնչին բան չէ Գերմանիայի արեւելեան նպատակների համար. շիցուք մինչև անգամ, որ Բերլինի կառավարութիւնը չի բաւականանում միայն բարոյական համակրանքով, այլ և գործնականապէս օգնում է Հիլֆսբունդին. բայց այս բոլոր ենթադրութիւնները, լինին նոքա ճիշտ թէ սխալ, այստեղ մեզ համար ոչ մի նշանակութիւն չունին. մեզ հետաքրքրում է շաւանական հարցը, և յայտնի է, որ Հիլֆսբունդի վրայ գերման կիսապաշտօնական և անկախ մամուլի կողմից յարձակումներ են եղել, պախարակումներով, որ նա զբաղւում է շաւանափոխական գործերով: Այդ յարձակումները կարող են կեղծաւոր կամ անկեղծ լինել. շորա պարզաբանութեամբ չպէտք է այստեղ զբաղւել: Այդ յարձակումները մեզ պիտի հետաքրքրեն այստեղ, ինչպէս մի ֆաքտ, մի երևոյթ, որ պատահել է, և պիտի միայն փորձել սրուզելու, որքան այդ բողոքները համապատասխանում են իրականութեան. ինչպէս ասել ենք, այդ կարելի է մասամբ պարզել Հիլֆսբունդի և ուրիշների փրած պատասխաններից:

1896 թւին, երբ եւրոպական և ամերիկական ընկերութիւնները շիմեցին Բարձրագոյն Դրան, որ նոցա թոյլ տրել սովեալ և վերաւորած հայերին և մանաւանդ որբերին օգնութիւն հասցնելու, Բ. Դուռը նախ չհամաձայնեց, բայց վերջը թոյլ տւեց, միայն մի պայմանով, որ այդ օգնութիւնը լոկ մարշալիական լինի, առանց որ և է քաղաքական կամ շաւանափոխական լեւին նպատակների: Մնացաւ հագիւ մի երկու փարի, և գերմանական մի երկու թերթերի մէջ սկսեցին երևան գալ թշտակցութիւններ և յօդածներ Հիլֆսբունդի գործունէութեան մասին, զովասանքներով և նկարողութիւնով, թէ Հիլֆսբունդի գործը լաւ հիմք կարող է լինել ապագայ գերմանական գաղթականութիւնների համար Փոքր-Ասիայում: Թէպէտ այս և սորա նման կշռադատութիւնները օգնութեան միութիւնից չէին արտաջայտւում, ոչ անմիջապէս, ոչ էլ անուղղակի կերպով նորա անշամների միջոցով, այլ յայտնւում էին բոլորովին կողմնակի անձերի կողմից, այնու ամենայնիւ, որովհետև վերոյիշեալ կարծիքը սկսեց աւելի յաճախ արտաջայտւել մամուլի մէջ, գերմանական արտաքին գործոց նախարարութիւնը բաւականին

խիստ լեզուով իւր կողմից հասկացրեց, որ փերման կառավարութիւնը այդ կարծիքներին և թգնութեան միութեանն զործերի հետ ոչ մի կապ չունի. բացի այդ, անուղղակի կերպով նա հասկանալ տեսց ում որ հարկաւոր էր, թէ որքէ թիւրիմացութիւնների շէպքում թիւրքաց կառավարութեան և Հիլֆսբունդի մէջ, վերջինը չպէտքէ սպասէ իւր կառավարութիւնից որքէ պաշտպանութիւն կամ միջնորդութիւն:

Բերլինի կենտրոնի տարեկան ժողովի արձանագրութեան մէջ կարդում ենք ի միջի այլոց հետևեալ խօսքերը. «Թգնութեան միութեանն առաջարկած էր, ի նկատի առնելով քաղաքական հանգամանքները, Հիլֆսբունդին ուրիշ անուն տալ, զանազան առաջարկութիւններ եղան, որոնց վերաբերմամբ մի ընդհանուր համաձայնութիւն ձեռք բերելը շեւ և ս չաջողեց<sup>1</sup>»:

Ինչպէս չկրօյ մենք իմացանք ձիշդ աշխարհներինց, այդ առաջարկութիւնը հետևեալն է եղել. Գերմանիայի արտաքին գործոց նախարարութիւնը առաջարկած էր «Գերմանական թգնութեան միութիւն Հայաստանի համար» (Deutscher Hilfsbund für Armenien) անուն մէջ, «թգնութիւն» բառի փոխարէն գործածել «միսսիօն» (= Mission) բառը, և «Հայաստան» կամ «հայեր» բառերը ամենեւին չիշխել: Նախարարութիւնը առաջարկում էր Հիլֆսբունդին իր անունը շննել՝ «Գերմանական արևելեան միսսիօն» (Deutsche Orient-Mission): Այս անունը մերժեց. բացարկութիւնները չկրօյ:

Նկատաբարական է հետևեալ շէպքը, որ պատահել էր պատրոր Բրոկսի (Brookes)՝ թգնութեան միութեանն անդամներինց մէկի հետ: Այս շէպքը կը բերենք այստեղ իրրև օրինակ. թէ որքան շնչին բաներ են առիթ տալիս գերման կառավարութեան չարձակելու գերմանական հայտերներին վրայ և մինչև ուր է հասնում գերման կառավարութեան պատրաստութիւնը կատարել առանց այլ և այլի Սուլթանի այս կամ այն հաճոյքը: Անցնելով Ձէյթունից, Բրոկսը ցանկացել էր այստեղ, յուսաւորակա՛ն մի եկեղեցում, առաւօրեան ժամերգութիւն կատարել. բայց այն րոպէին, երբ նա պատրաստուում էր գնալ կեղեցին, մի սուրհանդակ գալիս է

<sup>1</sup> «Aus der Arbeit d. arm. Hilfswerks 1899 April».

նորա մօտ և արգելում է ժամերգութիւնը: Այս արգելքի պատճառը եղել է մի բառ, որը նա արտասանել էր նախընթաց օրուայ երեկոցեան ժամերգութեան ժամանակ: Ինքը Բրոկսը այսպէս է պատմում. «Երեկոցեան ժամերգութեան ներկայ էր և մի ոստիկանական կոմմիսար. ևս խօսում էի փրկութեան մասին (Ղուկաս I, 68). «Վրկել» թրքերէն ասում է «կուրմարաց», որը նշանակում է նաև «ազատել». կոմմիսարը, որը ոչինչ չի հասկանում կրօնական գործերից, այնպէս է հասկանում, իբր թէ ես խօսում էի հայերի ազատութեան մասին փաճկական լծից: Հետեւեալ օրը վաղ առաւօտեան երբ շեռ մութ էր, նա շտապում է լուսաւորչական քահանայի մօտ և ասում՝ «օտարականը, որ այսօր քո եկեղեցում կամենում է քարոզ կարդալ, վտանգաւոր մարդ է, յեղափոխական է, որը ձեր ողջը կամենում է զրգուել, որպէս զի նա կառավարութիւնից անջատուի: Ես արգելում եմ քեզ թոյլ տալ նորան խօսելու: Դորանից յետոյ քահանան ընդհատեց պատարագը, փուն ուղարկեց ժողովուրդը, փակեց եկեղեցու դռները և ուղարկեց ինձ վերոյիշեալ լուրը»<sup>1</sup>: Այս շէպքի հետեանքը եղաւ, ինչպէս նկարագրում է «Berliner Tageblatt»-ի թղթակիցը հետեւեալը. «Զէյթունի դայմագամը յայտնում է Հալէպի վալիին, իսկ վերջինը՝ Կ. Պոլիս. Բարձրագոյն Դուռն էլ իւր կողմից յայտնում է Կ. Պոլսի գերմանական շեսպանին, խնդրելով նորա աջակցութիւնը, որպէս զի այսպիսի շէպքեր այլ ևս չպատահեն ապագայում: Այդ միջոցին Բրոկսը վերադառնում է Զէյթունից Կ. Պոլիս, ուր շեսպանապուսը նորանից բացատրութիւն է պահանջում: Պաստորը բացատրում է, որ ինքը խօսելով փրկութեան մասին, ոչ մի քաղաքական շտապութիւններ չէ ունեցել: Վեսպանապուսը այդ բացատրութիւնը Բ. Դրան գանդափի հետ միասին ուղարկեց Գերմանիացի արտաքին գործոց նախարարութեանը: «Դորա վերջը այն եղաւ, որ, յանուն գերմանական եւ տաճկական կառավարութիւնների մէջ իշխող լաւ յարաբերութիւնների, պաստոր Բրոկսը, համաձայն կայսերական հրամանի, պաշտօնազուրկ եղաւ, պատուէր ստանալով աւանց յեղաձգութեան վերադառնալ Գերմանիա: Թղթակիցը ինքը խոստովանում է, որ

<sup>1</sup> «Der Reichsbote», № 89, 1899.

Ֆրանսիան կամ Անգլիան այսպիսի շէպքում Բ. Գրան շիմուքներին ոչ մի ուշադրութիւն չէին ընծայի, բայց, աւելացնում է նա, շա միայն նորից կ'ապացուցանէր այդ պետութիւնների սխալ շիրքը (incorrecte Haltung) շէպի թիւքիան, և բացի այդ, նոցա վարժուները Գերմանիայի համար օրինակ չէ<sup>1</sup>:

Բայց ամենանշանաւորն է գերմանական կիսապաշտօնական թերթի «Kölnische Zeitung»-ի արշաւանքը Հիւթարուշի շէմի նա օգտուց իւր յարձակման մէջ ինչպէս պ. Բրոկսի հետ պատահած այս շէպքից, նոյնպէս և պատրիարք Օրմանեանի յայտնի նամակից րաձկաց մեծ վեգիրին, որը գրւած է մօտաւորապէս նոյն ժամանակները: Որովհետև Օրմանեանի այս գրութիւնը մեծ թիւրիմացութիւնների պատճառ եղաւ, և թօն. միութեան» ինչպէս թշնամիները նոյնպէս էլ համակրողները հիմնուում են նրա վրայ իրենց յարձակման և պաշտպանութեան ժամանակ, մենք կը բերենք այդ նամակից քաղածքներ զլսաւոր կէտերի մասին<sup>2</sup> Վն սփալւած եմ, գրում է Օրմանեանը, յարձնել կառավարութեան ուշադրութիւնը մի շրութեան վրայ, որը վաղուց զոյութիւն ունի և այժմ վատացել է, և որը մեծ նշանակութիւն ունի մեր եկեղեցու և համայնքի համար... Բողոքական և կաթոլիկ միսիօնարները զայթակղեցնում են հայերին, որոնք այժմ զրկւած են կենսական միջոցներից, պաշտպանութեան և օգնութեան զանազան խոստումներով, և հէնց Վան քաղաքում և նրա շուրջը, ուր սիրում է ոչ միայն աղքատութիւն, այլ և սով, հայերին խոստացւած է եղած փող այն պայմանով, որ նոքա թողնեն իրենց եկեղեցին, և անցնեն Հռոմի գիրկը, փոխեն թեակերէ-ի-օսմանիէն, փոխեն ցուցակները... (Zu Rom übergehen, ihr Teskeré-i-Osmanié wechseln, die Register ändern...): Նոցա ասւած է եղել որ թող կը րուի նրանց ճամբորդելու երկրի մէջ և փող վատրակելու: Այսպիսի խոստումներից շրքւած, յոսարովոր պաշտպանութիւն և օգնութիւն պիտի տրանան այն ազգերի կողմից, որոնց հպատակներն են շառնալու, խեղճ մարշիկը, շնորհիւ Վանի միսիօնարների սփալւած են եղել անցնել հռոմայական եկեղեցին:

<sup>1</sup> «Berl. Tageblatt»ի լաււււածի մէջ «Der Zeitgeist» № 32, 1890.

<sup>2</sup> Չունենալով բնագիրը, թարգմանում ենք գերմաներէնից:

Այս շաւանափոխական գործիչները (Proselytenmacher), կամ, աւելի ճիշդն ասած, քաղաքական գործակալները (Agitatoren) իրենց քարոզութեան մի կենդրոն և եպիսկոպոսական աթոռ են հաստատել, միադրուած ինչ ունենալով իրենց գործունէութիւնը ընդլայնելու:

Kölnische Zeitung-ին կամ գերման կառավարութեանը պարբերաբար հէնց այդ գանդափն էր հարկաւոր: Լրագիրը ասեց իւր էջերում Օրմանեանի այդ ամբողջ գրութիւնը և պ. Բրոկսի հետ պարահած յիշեալ շէպի նկարագրութիւնը, աւելացնելով սոցա մի քանի հարու նկարողութիւններ Հիլֆսբուքի հասցէին: Այս յօդածը խորագրած է. «Proselytenmacherei in der Türkei» (Հաւատարմութիւն գործունէութիւն թիւրքիայում<sup>1</sup>): Այս յօդածի մասին գրեթէ բոլոր գերմանական թերթերը խօսեցին այս կամ այն մտքով: Ոմանք արտապագեցին լիովին, ոմանք բաւականացան քաղաքացիներով, ոմանք իրենց նկարողութիւններն էլ արին, մի խօսքով նա փոքր ի շատէ աշուկ հանեց, որովհետև ամենքի համար պարզ էր, որ փոքր էր թելադրած կիսապաշտօնական «Քէօլնիէ Յայտունգ»-ի այդ յօդածը. կամ Բերլինից՝ արտաքին գործոց նախարարութիւնից, կամ էլ Կ. Պոլսից, գերմանական շեպանագիրից: Հարկաւոր է փոքր ի շատէ ծանօթանալ այդ յօդածի հետ, որպէս զի հասկանալի լինին նրա նկարմամբ յայտնած պարասխանները:

Այդ կոմիտէները (Հիլֆսբուքի), ասում է լրագիրը, չը բաւականացան գոյութիւն ունեցող կարօտութիւնը մեղմացնելով և ամենաընդարձակ կերպով սկսեցին զբաղել շաւանափոխական գործունէութեամբ. գերմանական փոքրասական և ազգային նշանաւոր շահերի համար սրեղծում են այդ հանգամանքից ծանր վրանգներ, որոնց վրայ չի կարելի ուշադրութիւն չը դարձնել, որովհետև անգլիացիք և ամերիկացիք առանձին հոռոյքով օգտուում են ամեն մի շէպից փաճկական պաշտօնական շրջաններում կասկածանքներ արթնացնելու գերմանական անշահասիրութեան և բարեկամութեան վրայ և Պերմանիացի նկարմամբ խորին ստորութիւն ծագեցնելու համար: (...) Պարբերաբար Օրմանեանի գրութեան թարգմանութիւնը,

<sup>1</sup> «Մուրծի» նախընթաց համարում այդ յօդածի վերնագիրը սխալ էինք չափոնած. «Հաւատարմութիւն»-ի փոխարէն հարկաւոր է «Պիւրքիայում»:

որը ինքնին ամեն բան պարզ ասացուցանում է, ուշաբեւած է մեզ Կ. Պոլսի գերմանական շրջաններից, որոնք զուշակում են թէ միսիոնարների վարմունքից մեծ վնասներ են հասնելու գերմանական շահերին Արևելքում: Կրագիրը ասում է, որ պարսիարքի նամակի հիման վրայ, Բ. Գուռը փակեց այն որբանոցները և բարեգործական հիմնարկութիւնները, որոնք կառուցւած են եղել առանց նրա վաւերացման: Ընդհանր ապացուցում է բաւականին, աւելացնում է նա, թէ որքան սխալ էր հէնց սկզբից, կարօք ազգաբնակութեան օգնութիւն բերել, առանց հաստատ իմանալու, թէ այդ օգնութեան գործին զօրեղապէս աջակցելու է արդեօք թիւրք կառավարութիւնը, թէ ոչ: Քէօլնիշէ Յայտունգ'ը վերջացնում է խորհուրդ տալով, որ Հիլֆսբուռնդ'ի գործիչները հրաժարեն հայկական օգնութիւնից և այն ահագին գումարները, որ նոքա հաւաքում են, գործադրեն Գերմանիայում, յօգուտ գերմանացիների: Եւ փոխադրութիւն, որի հետ բոլոր փող նւիրողները, հաստատ է որ, համաձայն կը լինեն:

Այսպիսի խորհուրդներ Հիլֆսբուռնդ'ը յաճախ է սրացել զանազան կողմերից, և միշտ միևնույն հիման վրայ, այն է թէ «Յայն. միութիւնը» վնասում է գերմանական շահերին Արևելքում: Այս պարտաւարանութեան աւելցնում են և ուրիշը թէ յաւանափոխական գործը զարշնլի բան է: Միայն ծիծաղելին այն է, որ այս վերջին բարոյական պարտաւարանութիւնը բերում են հէնց նոքա, որոնք ամենացինիկ կերպով կրկնում են Բիսմարկի խօսքերը Արևելքի մասին և չիշեցնում են նորից ու նորից գերմանական ընթերցողին, թէ հարկաւոր է վերջապէս անգլիացիներից սովորել հսական քաղաքականութիւն գործադրելը, զբաղւելով միայն գերմանական շահերով և թողնելով ցնորամտի մարդասիրական ձգտումները: «Berliner Tageblatt»-ի Կ. Պոլսի թղթակիցը կամենալով ի հարկէ ազդել Հիլֆսբուռնդ'ի անդամների վրայ, մինչև անգամ հաւատացնում է, որ հայերը թէպէտ և արտաքին կերպով շնորհակալութեամբ են վերաբերում գերմանական հաշատէր գործիչներին, բայց իսկապէս, շուրտի խօսքերում նոքա կամ ծիծաղում են չլիմար գերմանացիների վրայ, որոնք հայերի համար փող են ծախսում և այդպիսով միջոց են տալիս հարուստ հայերին խնայելու իրանց փողը, և կամ բարկա-

նում են, որ այդ գերմանացիները անջատու ծ են հայ երեխաները հայրենական եկեղեցուց: Թշվառացու թեան վերջում այսպէս է ստում հեղինակը. «բայց... բայց ամբողջ այս հայ որբական գործի մէջ (Waisenwerk) մի ուրիշ բան էլ կայ, բացի լոկ մարդասիրութիւնից: Բարեգործական շիմակի փակ ես տեսնում եմ հայրենասիրական շովինիզմ և մոլեռանդ Գաւանափոխութիւն<sup>7</sup>):»

Այս տեսակի են եղել առհասարակ գերմանական յարձակումները Հիլֆսբունդի վրայ: Այլ օրինակներ առաջ բերելը կը նշանակէր կրկնել նոյնը: Այդ պատճառով այժմ ուղղակի կ'անցնենք այն հարցին, թէ ինչ պատասխաններ են տրուել Գրանց Հիլֆսբունդի և ուրիշներին կողմից: Այս կէտի համար մենք, ի հարկէ, նոյնպէս կը շարանանք ցոյց տալով միայն ամենաբնորոշ և հետաքրքրական պատասխանները:

### (Շարունակելի)

<sup>7</sup> Տես ծանօթ. 4.